


1662-1668

17 123 Un  
4-64












# ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ



ՀԵՂԻՆԱԿ

ՇԱԽԼ ՏԻՒԲԻՒԻ


ՆԱԽԱՐԱՐՄՈՒԵՏ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Եւ

ՆՍԽԿԻՆ ՈՒՍՈՒՑԻՉ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ




ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԱԽԱՐԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԵՐՈՒԱՆԴ (Արմականի լեռներ)



Հրատարակիչ

Տ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

معارف نظارت جلیله سنك رخصته به طبع اوڠشدر .

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. 8. ԱՍԱՑՈՒՐԵԱՆ

(ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿ.) Պապը Ալի ճատուէ, թիւ 52

ԱՐԵՎԱՏՅԱՆ  
ՈՒՂԻԿԱՑՎԱԲՈՒՐ

— X X X X —

108574-42

ԽԱՐԱՀԱՅ



6469-57

ՅԱՀԱՅԱԿԱՆ

Հ Յ Ա Խ Ա Դ

— ասօս օօօօօ —

ՅԱՀԱՅԱԿԱՆ

Հ Յ Ա Խ Ա Դ

94.100-11

ՏԱՐԱՎԱՐԱՐ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՈՒՂԻԿԱՑՎԱԲՈՒՐ  
ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս զիրքը կուզայ անհրաժեշտ պակաս մը լեցունեկ մեր դպրոցական դասագիրքերու շարֆին մէջ : Բարոյագիտութիւնը ամենէն կարեւոր եւ կենսական ուսումներին մէկն եղած է միշտ ու պիտի ըլլայ : Պարոն Շառլ Տիրիի, Ֆրանսայի համբաւաւոր բարոյախօսը, որ այժմ պետական ամենէն բարձր պաշտօններին մէկուն գրուխը կը զննուի, պատրաստած է այս զիրքը մեծ խնամքով . այս անոնին արդէն անհիրքելի երաշխիք մըն է թէ զիրքը զերծ է ու եւ է թերութենէ, եւ անհուն սպառում ունեցած է ոչ միայն Ֆրանսայի՝ այլ եւ օսար երկիրներու մէջ : Մեր դպրոցական մանկաւոյն օգտակար հանդիսանալու փափազը թեղադրեց մեզ ձեռնարկելու այս օգտակար զրին հրատարակութեանը : Ընդհանրապէս մեր դպրոցներուն մէջ մինչեւ հիմակ մասնաւոր դաս մը յատկացուած չէ ուսւան այս ամենակարեւոր ճիշդին : Ներկայ բարգմանութիւնը, զոր ջանացինք կարելի եղածին չափ դիւրհանակալի ոնոյ կատարել, միցոց մը պիտի ընծայէ անշուշտ որ այսուհետեւ մասնաւոր դաս մը հասաւուի ամեն դպրոցներու մէջ Բարոյագիտութեան համար :

Բնականաբար այսպիսի զիրք մը պէտք եղած օգտակարութիւնը չունենաւ երբ աշակերտին ձեռքը յանձնուելով՝ բառ առ բառ զոց ընկել տրուի . ուսուցիչը կրնայ անոր ամեն մէկ հասուածն իրեն նիւթ առնելով՝ ըստ կարի ընդլայնել ու պայծառապէս բացատրել աշակերտներն : Հետեւապէս այս զիրք պատուական առաջնորդ մը կրնայ ըլլալ դաստուին կամ Տօրհմին, որ կուզէ բարոյական պատուերներ տալ իր սաներուն :





Հ. Ի՞նչ է Մարդը .

Պ. Մարդն է բարոյական էակ մը , որ բանականութեամբ օժտուած , ազատ է ընելու չարը կամ բարին , եւ պատասխանատու է իր գործերուն :

Հ. Ի՞նչ բանով գերադաս կը համարուի մարդը միւս կակներէն :

Պ. Իր բարոյական էակի հանգամանքովը , զոր աշխարհիս վրայ մարդը միայն ունի :

Հ. Ի՞նչ կը կոչուի մարդուն այդ մասնաւոր յատկութիւնը , որով կը տարբերի միւս կակներէն .

Պ. Մարդկային արժանապատութիւն , որով մարդը գերադաս կը համարուի բոլոր միւս էակներէն . մարդու եւ անասուններու միջեւ եղած դլսաւոր տարրերութիւնն այդ է :

Հ. Ի՞նչ է Բարոյական օրէևիքը .

Պ. Բարոյական օրէնքը՝ բարին ընելու ու չարէն զգուշանալու պարտականութիւնն է՝ ամեն մարդու համար :

Հ. Ի՞նչ է Խիղմը .

Պ. Խիղմն է մարդկային այն կարողութիւնը , որով մարդ չարը քարիէն կը զանազանէ , եւ կը պարտաւորի ընել բարին եւ զգուշանալ չարէն :

Հ. Ի՞նչ է Կամքի ազատութիւնը .

Պ. Կամքի ազատութիւն կ'ըսուի մեր այն կարողութեանը , որով կ'ընտրենք բարին կամ չարը :

Հ. Ի՞նչ է Պատասխանատութիւնը .

Պ. Եթէ մենէ մէկը չար գործ մը ընէ , կրնանք անոր սա հարցումն ընել . «ինչո՞ւ չար գործ մը ըրիր , քանի որ կամքի ազատութիւն եւ պարտականութիւն ունիս բարին գործելու» . ահա այս է պատասխանատութիւն ըսուածը . պատասխանատութիւնը առաջ կուգայ թէ՛ պարտականութենէ եւ թէ՛ կամքի ազատութենէ :

Հ. Միք ինչպինիս պատասխանատու ճանչնալո՞ւ ենք .

Պ. Այո՛ , որովհետեւ գործելէ ետքը հաճոյք կը ըզդանք՝ եթէ բարի գործ մը ըրած ենք , եւ խղճի խայթ կ'ունենանք՝ եթէ չարութիւն մը ըրած ենք :

Հ. Որո՞նք են բարոյականի հիմնական գաղափարները .

Պ. Բարոյականի հիմնական գաղափարներն են , Մարդկային արժանապատութիւն , Պարտականութիւն , Կամքի ազատութիւն եւ Պատասխանատութիւն :

Հ. Խիղմը բաւակա՞ն է մեզի սորվեցնելու մեր պատականութիւնը , պէտք է որ դաստիարակութիւնը մը շակէ եւ զարգացնէ խիղմը , ինչպէս որ երկրագործութիւնը կը մշակէ եւ կ'արգասաւորէ հոգը :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Մարդ՝ բարպական էակ կը համարուի իր բանականութեամբը, կամքի աղատութեամբը եւ պատասխանատուութեամբը. 2. Սյս երեք հանգամանքներով կ'որոշուի մարդը միւս էակներէն եւ այդ հանգամանքներն են որ մարդկային արժանապատառթիւնը կը կազմն. 3. Բարպական օրէնքը կամ պարտականութիւնը կը հրամացէ ամեն մարդու՝ ընել բարին եւ զգուշանալ չորեն. 4. Խիզճը մեղի կը յայտնէ չարն ու բարին. 5. Կամքի աղատութիւնը մեղի կը թոյլատը ընտրելու բարին կամ չարը. 6. Պատասխանատութիւնը պարտականութեան եւ կամքի ազատութեան հետեւութիւնն է. 7. Խիզճը պէտք ունի մշակուելու եւ զարդանալու՝ դաստիարակութեամբ.

### ԳԼՈՒԽ Բ.

ՏՂՈՒՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա.

### ՏՂԱՆ ԻՐ ՀՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՋ

Հ. Ի՞նչ է լնտանիքը.

Պ. Ընտանիք ի՛ըսուի ժողովումն հօր, մօր, մեծ հօր, մեծ մօր եւ զաւակներու, որոնք իրարու միացած են այնքան սիրոյ կապերով, որ անոնցմէ իւրաքանչիւրը կը մասնակցի ամենուն ուրախութիւններուն եւ տառապանքներուն:

Հ. Տղայ մը ի՞նչ պարտականութիւններ ունի իր ծը-  
նողաց նկատմամբ .

Պ. Տղու մը իր ծնողաց նկատմամբ ունեցած պար-  
տականութիւններն են , Յարգանք , Հնազանդութիւն ,  
Սէր եւ Երախտագիտութիւն :

Հ. Ի՞նչ լսել է ծնողը յարգել .

Պ. Ծնողքը յարգել կը նշանակէ՝ ճանչնալ անոնց իշ-  
խանութիւնը , եւ իր ակնածութիւնը յայտնել անոնց՝  
թէ՛ խօսքով եւ թէ՛ գործքով :

Հ. Ի՞նչ լսել է հնազանդիլ ծնողաց .

Պ. Ծնողացը հնազանդիլ կը նշանակէ անոնց կամքին  
փութով համակերպիլ՝ երբ կը հրամայեն մեզի ընել  
ո եւ է գործ , եւ կամ կ'արգիլեն :

Հ. Ի՞նչ լսել է ծնողը սիրել .

Պ. Ծնողքը սիրել կը նշանակէ անհուն գորով մը  
յայտնել անոնց յարաժամ հոգածութեանը եւ բարիք-  
ներուն :

Հ. Ի՞նչ լսել է Երախտագէտ ըլլալ իր ծնողաց .

Պ. Ծնողացը Երախտագէտ ըլլալ կը նշանակէ մեր  
սրտին մէջ հաւատարմօրէն պահել յիշատակն այն ամեն  
բաներուն , զորս մեզի կընեն . անոնք մեր հացը կը ճա-  
րեն իրենց ճակտին քրտինքովը , եւ ասոր փոխարէն  
մեզմէ ո եւ է փոխարինութիւն չեն սպասեր , բաւական  
է որ մենք Երջանիկ ըլլանք ու սիրենք գանոնք :

Հ. Ծնողաց Երախտագիտութիւն յայտնելու համար մի-  
այն զանոնք սիրելը բաւակա՞ն է .

Պ. Ո՛չ . սիրոյ պէտք է միացնել նաեւ ձեռնտուու-  
թիւն , այսինքն պէտք է օգնենք մեր ծնողաց՝ մասնա-  
կցելով անոնց աշխատութիւններուն . պէտք է խնամենք  
զիրենք՝ երբ հիւանդանան , վերջապէս օգնելու ենք ա-  
նոնց՝ երբ ծերանան եւ անկարող ըլլան աշխատելու ,

վասն զի յիշելու ենք միշտ որ անոնք ալ մեր տղայութեան ատեն մեզի օգնած են :

Հ. Ի՞նչ են մեր պարտականութիւնները մեր մեծ հօր կամ մեծ մօր նկատմամբ .

Պ. Ինչպէս մեր հօրը եւ մօրը՝ այնպէս ալ մեր մեծ հօր եւ մեծ հօր պարտինք Յարդանք, Հնազանդութիւն, Սէր եւ Երախտագիտութիւն, որովհետեւ իր ծնողաց հայրը կամ մայրը չի սիրողը ի՞նչպէս իր ծնողքը սիրած կըլլայ :

Հ. Եղբայրներու եւ յոյրերու փոխադարձ պարտականութիւնները որո՞նք են .

Պ. Սէր, Օգնութիւն եւ Բարի օրինակ :

Հ. Եղբայրներ ու յոյրեր ի՞նչպէս պարտին զիրար սիրել :

Պ. Ինչպէս որ իրենց ծնողքը կը սիրէ զիրենք . որդիական սէրը թերի կըլլայ՝ եթէ Եղբայրական սէրը չմիանայ անոր :

Հ. Եղբայրներու եւ յոյրերու միջեւ ինչպէս կըլլայ օգնութիւն :

Պ. Մեծերը պարտաւոր են պաշտպանել փոքրերը եւ օգնել անոնց . միթէ անդրանիկները իրենց կրտսեր եղբայրներուն ու քոյրերուն նկատմամբ իրեւ փոքր հայրեր եւ մայրեր չե՞ն :

Հ. Եղբայրներու ու յոյրերու իրենց կրտսերներուն բարի օրինակ ըլլալը ի՞նչ կարեւորութիւն ունի .

Պ. Տղաքները՝ մեծերուն բարի կամ չար վարքը կ'օրինակեն , օրինակի համար , եթէ անդրանիկը դպրոցէն բացակայ գտնուի , կամ անհնազանդութիւն ցոյց տայ եւ կամ ստէ , չար օրինակ կըլլայ կրտսերներուն , ուստի Եղբայրնե՛ր ու քոյրեր , պարտիք միշտ բարի օրինակ ըլլալ իրարու :

Հ. Միայն ծնողի ու սղամի եև որ կը կազմեն ընտառիչը :

Պ. Ոչ, ընտանիքի անդամներ պէտք է նկատուին նաեւ այն անձերը՝ որք կապրին մեր քով եւ կաշխատին մեզի համար՝ թոշակով մը, զոր օրինակ, պաշտօնեաները, գործաւորները ու ծառաները ընտանիքի օժանդակներն են :

Հ. Մենի ի՞նչ պարտականութիւններ ունինից այս օժանդակներուն նկատմամբ :

Պ. Պարտաւոր ենք յարդել անոնց մարդկային արժանապատութիւնը, անոնց հետ քաղաքավարութեամբ, արդարութեամբ եւ բարութեամբ վարուինք : «Տիրոջը բարութիւնը ծառան բարի կ'ընէ» ըսուած է :

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ընտանիք. 2. Տղուն իր ծնողաց նկատմամբ ունեցած պարտականութիւնները. 3. Տղաք պարտին օգնել իրենց ծնողաց. 5. Տղուն պարտականութիւնը իր մեծ հօր եւ մեծ մօրը նկատմամբ. 5. Ելքոյրներու եւ քոյրերու փոխադարձ պարտականութիւնները. 6. Ծառաները ընտանիքի օժանդակներն են.

### Բ.

#### ՏՂԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷԶ

Հ. Ի՞նչ է Վարժարանը :

Պ. Վարժարանները հաստատուած են բառնալու համար տղիտութիւնը՝ որ մարդկային ազգի ամենամեծ թշնամին է :

Հ. Դպրոցականի մը առաջին պարտականութիւնը ի՞նչ է :

Պ. Ուսման մէջ յարատեւութիւն։ և յամառ պահան  
Հ. Միմիայն յարատեւութիւնն է։ և անդ դժուակ, Պ  
Պ. Ոչ, յարատեւութեան հետ պէտք է նաեւ ունե-  
նայ փութաջանութիւն, այսինքն ուշադրութեամբ հե-  
տեւի դասերուն եւ ուսուցչին տուած պարտականու-  
թիւնները կատարէ միշտ խնամով։ Դպրոցի մէջ փութա-  
ջանութիւնը՝ կեռնքի մէջ աշխատութեան վարժու-  
թիւնն է։

Հ. Դպրոցականի մը իր ուսուցչին նկատմամբ ու-  
նեցած պարտականութիւնները որո՞նք են։

Պ. Դպրոցականը պարտաւորէ միշտ յարգելիր ուսու-  
ցիչները ու անզնց հնազանդիլ ուսուցիչը մեր ծնողքնե-  
րուն տեղը կը բռնէ։ այս վերջինները մեր օրական հացը  
կը հայթայիթեն, ուսուցիչը դաստիարակութիւնը կուտայ՝  
որ հացէն ետք մեր առաջին պէտքն է։

Հ. Երբ դպրոցին կը մեկնինք, կը դադրի՞ն մեր պար-  
տականութիւնները ուսուցիչներնուս նկատմամբ։

Պ. Ոչ, մշտատեւ երախտագիտութիւն պարտինք մեր  
ուսուցիչներուն, որովհետեւ անոնք կը դաստիարակեն  
մեզ եւ մեր իմացուկանութիւնը կը դպրոցնեն։

Հ. Տղայ մը երբ դպրոցի մը շրջանը դացնէ, կրնայ  
կարծել թէ աւարտած է դասիարակութիւնը։

Պ. Մեր դաստիարակութիւնը լրացած չէ երբ դպրո-  
ցէն դուրս ելլենք, կետնքի մէջ մարդ կրնայ եւ պար-  
տի միշտ կատարելագործել ինքզինքը, դպրոցը։ նախ-  
նական ծանօթութիւններ միայն կուտայ . մեզի կը պատ-  
կանի զանոնք կատարելագործել։

Հ. Ի՞նչ միջոցներով կրնանք ամբողջացնել դպրոցի  
մէջ ընդունուած դասիարակութիւնը։

Պ. Գլխաւորաբար երեք միջոցներ կան դպրոցին մէջ  
մեր ստացած դաստիարակութիւնը ամբողջացնելու հա-  
մար, Ա. Ողջամիտ մարդերու քով յաճախել. Բ. Մենէ

աւելի ուսեալ եւ զարգացած մարդերու հետ տեսնուիլ, Դ , Ընտիր ընթերցումներ ընել:

Հ . Դպրոցական ընկերներնուս նկատմամբ մեր պարականութիւնները որո՞նիք են :

Պ . Մեր ընկերներուն պարտինք՝ սէր, բարի օրինակ եւ վստահութիւն . մեծերը պարտին օգնել փոքրերուն . դպրոցին մէջ միշտ եղաօր պէս վարուելու ենք իրարու հետ :

Հ . Ի՞նչ ըսել է մրցումը ընկերներու միջեւ :

.Պ Լաւագոյնն ընելու համար իր ընկերը գերազանցելու փափագին մրցում կ'ըսուի, իսկ նախանձը՝ շատ տգեղ պակասութիւն մըն է : Եթէ մեր ընկերներէն մէկը լաւագոյն պայմաններու մէջ կը գտնուի, չի նախանձինք անոր վրայ :

Հ . Ընկերներու մէջ եղած ամենամեծ պակասութիւնը ո՞րն է :

Պ . Կեղծաւորութիւնը : Եթէ ընկեր մը յանցանք մը գործէ, պէտք չէ իմացնել . ընդհակառակն եթէ մենք պակասութեան մէջ գտնուինք, պէտք չէ թողունք որ պատժուի ուրիշ մը մեր տեղը . այլ պարտաւոր ենք անկեղծօրէն ըսել թէ յանցաւորը ես եմ : Ամեն մարդ իր գործերուն համար պատասխանառու է . եւ ամեն մարդ իր գործերուն համեմատ պէտք է դատուի :

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Վարժարանները հաստատուած են տգիսութիւնը բառնալու համար. 2. Մարդկոյին ազգի ամենամեծ թշնամին տգիտութիւնն է. 3. Դպրոցականի մը պարտաւորութիւնը. 4. Ուսուցչը մեր ծընողաց փոխանորդն է. 5. Դպրոցականին իր ուսուցչին նկատմամբ ունեցած պարտականութիւնը. դաստիարակութիւնը շարունակելի է ամբողջ կեանդի տեւողութեան մէջ. 7. Դպրոցականին պարտաւորութիւնը իր ընկերին նկատմամբ. 8. Ընկերները պարտին սիրել զիրար. 9. մըցում եւ նախանձ. 10. Կեղծաւորութիւն.

## ԳԼՈՒԽ Գ.

**ՄԱՐԴՈՒՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Ա.

**ԻՐ ԱՆՁԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ**

**Հ.** Մարդ ունի<sup>o</sup> պարտականութիւններ իր անձին նրանցումամբ :

**Պ.** Այս՝, որովհետեւ ստիպուած է յարգել եւ զարդացնել իր մէջ արժանապատութեան զգացումը :

**Հ.** Որո՞նք են այդ պարտականութիւնները.

**Պ.** Այդ պարտականութիւնները երկու տեսակ են, Մարմնական եւ Հոգեկան : Մարմնական պարտաւորութիւններունվրայ կրնանք աւելցնել արտաքին բարիքներու եւ անասուններու վերաբերեալ պարտականութիւններն :

**Հ.** Ի՞նչ է Հոգին :


**Պ.** Հոգին մարդուս անձն է իր բանականութեամբը, կամքի ազատութեամբը եւ պատասխանատութեամբը. Հոգին է տէր եւ վարիչ :

**Հ.** Ի՞նչ է Մարմինը.

**Պ.** Մարմինը հոգիին ծառան ու գործիքն է : Մարմինին նկատմամբ մեր պարտականութիւնները՝ նպատակունին մեր հոգիին բարիքը միայն :

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Մարդուն իր անձին նկատմամբ ունեցած պարտականութիւնները. 2. Այս պարտականութիւններն երկու տեսակ են. 3. Մարդն էտք մըն է հոգեղէն ու մարմնղէն. 4. Հոգին է տէր, իսկ մարմինը ծառապյ:



## Պ Թ Ա Խ Բ

## ՄԱՐՄԻՆԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Հ. Ո՞րոնի եև մեր մարմնական պարտականութիւններուն զյաւորութերը :

Պ. Մաքրութիւն, ժուժկալութիւն եւ Զափաւորութիւն, որոնց ամբողջութեանը կ'ըստէ՛ Առողջապահութիւն :

Հ. Ի՞նչ է Մայրութիւնը .

Պ. Մաքրութեան նպատակն է մարմինը առողջ պահել կանոնաւոր լուսցումներով : Անմաքրութիւնը մեծ անտեղութիւններ ունի թէ՛ մեզի եւ թէ՛ ուժիշներու համար, ու շատ մը հիւանդութիւններու ենթակայ կընէ զմեզ :

Հ. Ի՞նչ է Ժուժկալութիւնը եւ Զափաւորութիւնը .

Պ. Ժուժկալութիւնը կը նշանակէ քիչ ուտել, եւ Զափաւորութիւնը՝ քիչ խմել : Զափէ ուեկի մնունդը կը դանդաղցունէ մարմինը ու կը ծուլացնէ միտքք : Ստամոքսը շատ լեցունողին գլուխը պարագ կըլլայ : Ոգեկցը ըմպելիքի չարաչար գործածումը յիմարութիւններ գործել կուտայ, արբեցութիւնը ամօթմըն է մարդկային արժանապատութեան համար :

Հ. Ուտելու եւ խմելու կանոնը ո՞րն է :

Պ. Ասլրելու համար պէտք է ուտել եւ խմել, պէտք չէ ասլրիլ ուտելու եւ խմելու համար : Որկրամոլ մարդքը մարդկային սկզբունքը ոտնակոխ ընել՛ զատ անսուններուն կը հաւասարի :

Հ. Ի՞նչ է Առողջապահութիւնը .

Պ. Առողջապահութիւնն է ամբողջութիւննը այն կանոններուն որոց պէտք է հետեւինք՝ մեր առողջութիւնը պահպանելու համար : Առողջապահութիւնը երեք կանոն

ունի . Մաքրութիւն , Ժուժկալութիւն եւ Զափաւորութիւն :

Հ . Ի՞նչ է Մարմնամարզը .

Պ . Մարմնամարզը ամբողջութիւնն է այն մարմնական շարժումներու որոնք կը դօրացնեն եւ ճկուն կը ընեն մարմինը . այսպէս , քալել , վաղել , ցատկել , լեռնէ մը վերելել , լողալ , այլ եւ այլ խաղեր , վերջապէս մարմնամարզական գործիքներու միջոցաւ կատարուած շարժումներ մարմնամարզ են :

Հ . Մարմնամարզը ի՞նչ առնչութիւն ունի առողջապահութեան հետ :

Պ . Առողջապահութիւնը ու մարմնամարզը հաւասար բազէս կարեւոր են մարմինին , առաջինը մարմինը լաւ վիճակի մէջ կը պահէ , իսկ երկրորդը կը զօրտցունէ ու ճկուն կընէ զայն :

### ԲՈՎԱՆԴԻԱԿՈՒԹԻՒՆ

1. Առողջապահութիւն 2. Ժուժկալութիւն եւ Զափաւորութիւն . 3. Անմաքրութիւն . 4. Մարմնամարզ .

q.

ԱՐՏԱԲԻՆ ԲԱՐԻՔՆԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ . Մարմնական պարտականութիւնները մի միայն մարմինին յատուկ են :

Պ . Ոչ , մեր մարմնական պարտականութիւնները կը ստիպեն զմ՞ով ձեռք բերել արտաքին բարիքները եւ ի կիր առնել զանոնք :

Հ. Արտաքին բարիքները որո՞նի են :

Պ. Արտաքին բարիքներ այն բաներն են, զորս մենք կը ստանանք բնութենէն եւ ընկերութենէն, մեր պէտքերուն գոհացում տալու համար, օրինակի համար, որնունդ, հագուստ, բնակարան :

Հ. Ի՞նչ միջոցներով կրնանք ձեռք բերել այդ արտաքին բարիքները .

Պ. Արտաքին բարիքները կրնանք ձեռք բերել աշխատութեամբ . մշակը, գործաւորը, վաճառականը, արուեստագետը, գիտունը, ամենքն ալ աշխատողներ են :

Հ. Աշխատութեան օրենքը ամեն մարդու համար պարաւորի՞չ է :

Պ. Այո՛, պարտաւորիչ է, վասն զի մարդ ծնած է աշխատելու համար, ինչպէս թռչունը՝ թռչելու համար . հետեւաբար թէ՛ մտաւոր եւ թէ՛ ձեռական աշխատութիւնը պէտք է գնահատուի : Անգործութիւնը անարդ բան մըն է :

Հ. Ի՞նչու աշխատութիւնը անհրաժեշտ է .

Պ. Աշխատութիւնը անհրաժեշտ է՝ բնութիւնը բեղմաւորելու համար, առանց աշխատանքի եւ ցանքի հողը ամուլ կը մնայ . իմացականութիւնն ալ առանց խորհրդածութեան եւ կիրարկութեան՝ ամուլ կը մնայ : Զես կրնար շահիլ առանց աշխատութեան :

Հ. Ի՞նչ է Հեռատեսութիւնը :

Պ. Հեռատեսութիւնը մարդուն այն յատկութիւնն է՝ որով այսօրուընէ կը նախատեսէ այն միջոցները՝ զորս ձեռք բերելով միայն կրնայ ապրիլ վաղը :

Հ. Ի՞նչու համար պէտք է հեռատես լլալ :

Պ. Որովհետեւ մարդ չէ կարող միշտ աշխատիլ, գործերու դադար եւ հիւանդութիւններ երբեմն ակամայ ընդմիջումներ կը պատճառեն մեր աշխատութեան, վերջապէս ծերանալով՝ անկարող կըլլանք գործելու . ուս-

աղի պարտաւոր ենք մեր դրամական կարողութենէն մաս  
մը յատկացնել իրբեւ պահեստ՝ այդ տաժանագին օրեւ-  
րուն համար :

Հ. Ի՞նչ է խնայողութիւնը .

Պ. Խնայողաթիւնը՝ «Պրուտը և փաստեալութեան» պահա-  
կեստի գումարն է, մեր անողիաստ օրերուն տօգավաճը՝  
մարդ կը հիւանդանայ, գործ չունենար, կը ծերանայ,  
այն ատեն խնայողութիւնը նեցուկ կըլայ իրեն :

Հ. Անհատական խնայողութիւնը կրնայ միշտ ապա-  
հովել ապագան .

Պ. Անհատական խնայողութիւնը շատ քիչ անդամ  
կ'ապահովէ ասլագան, ընկերակցութիւններ պէտք են,  
որպէս զի հիւանդութեան, գործերու դադարի եւ ծե-  
րութեան ատեն մեր ապրուստի միջոցներն ապահոված  
ըլլոնք գոխադարձաբար :

Հ. Փոխադարձ նպաստի ընկերութիւնը ի՞նչ տեսակ  
կազմակերպութիւն մը և է .

Պ. Փոխադարձ նպաստի ընկերութիւն կ'ըսուի հա-  
ւաքումն շատ մը անձերու, որոնք կ'ընկերակցին փո-  
խադարձաբար՝ ապահովելով Հանգստեան թոշակ՝ ծե-  
րութեան ատեն, Ապրուստի ծախք՝ գործերու դադարի  
պահուն, եւ Խնայողաթարութիւն՝ հիւանդութեան մէջ :

Հ. Ի՞նչ է Պարտը .

Պ. Պարտք կ'ըսուի ուրիշէ մը փոխ առնուած դրամին,  
որով կը հաւասարականնեք մեր ելեւմուտքը՝ երբ սա-  
րաց մը ունենայ մեր աշխատութեան կամ խնայողու-  
թեան անբաւականութիւնն : Պարտք ընելով մեր անձ-  
նիշանութիւնը կը կորմացնենք եւ կը նուազեցնենք մեր  
արժանապատուութիւնը :

6469-57

Հ. Ի՞նչ է Բախտախաղը .

Պ. Բախտախաղը միջոց մըն է , որով դրամ ձեռք կը ձգենք՝ փոխանակ աշխատութեամբ զայն ստանալու : Խաղամոլը ոտնակոխ կընէ աշխատութեան օրէնքը եւ սխալ կը հաջուէ , վասն զի բախտի խաղերու մէջ կորունցնողները աւելի բազմաթիւ են քան շահողները :

Հ. Ի՞նչ է Ազահութիւնը .

Պ. Ծայրայեղ արծաթսիրութեան՝ Ազահութիւն կ'ըսուի . ազահը ստակ կը դիզէ միմիայն զոյն դիտելու հաճոյքին համար , առանց երբէք գործածելու . ազահը առաջին կարգի անձնասէր մըն է :

Հ. Ի՞նչ է Շոայլութիւնը .

Պ. Անհաշիւ , առանց վաղուանը հոգ ընելով ծախսուելուն՝ կ'ըսուի Շոայլութիւն . շոայլ մարդը աջու ձախ կը վասնէ , ճպուովն պէս կ'երգէ կը Թպարէ չգեղեցիկ եղանակին , բայց երբ ցրտաշունչ եղանակը Դայ՝ իրան մը չունենար ուտելու :

Հ. Որու կ'ըսուի Տևէկսագէս մարդ .

Պ. Այն մարդուն՝ որ ազահութենէ ու շոայլութենէ՝ հաւասարապէտ կը խորշի :

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

1. Արտօղին քարիք . 2. Աշխատաւթեռն օրէնք . 3. Հետամեռութիւն եւ խնայողութիւն . 4. Ծնկերուկցութիւն . 5. Պարտք . 6. Բախտախաղ . 7. Ագոհութիւն եւ Շայլութիւն . 8. Տնտեսագրութիւն .

Հայք մատնելու պահանջում զին շամանու զի շահ նաև զին խոյնց պահութ : Հայք մատնամասը մատն զի զին զինցեցքունք զի պահութ : Հայք մատնամասը մատն զի զին զինցեցքունք զի պահութ :

η.

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Անասուններու նկատմամբ որո՞նք են մեր պարագաներինը և անասունները .

Պ. Պարտինք անոնց հետ քաղցրութեամբ վարուիլ .  
այս որ դանոնք չարչրկենք անօգուտ տեղը . Զարութիւնը անարժան բան մըն է բանաւոր էակի մը համար :

Հ. Մեր այս պարագաներինը ամեն անասուններու անխաչիր կը պատշաճի .

Պ. Մանաւորապէս ընտանի անասուններու համար .  
է մնը այս պարտականութիւնը . զորօրինակ, եզը,  
կովը, ոչխարը, ծին եւ այլն ընտանի անասուններ ըլլար  
լով, մեր աշխատութեան ընկերներն են . ընդհակառակը  
պարտինք ինքզինքնիս տաշտապանել ֆստուկար կենդանիներու դէմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բնատնի անասուններու հետ քաղցրութեամբ վարուելու ենք:  
անօրջ . մը զեզմ զամանակայուրուաք մարդերու .

մազմանակայուրուաք այս ուսք զազաւու ուն .  
զազաւու մազմանակայուրու .

li.

ՀՈՓԻՒ ՎԵՐՍԱԲԵՐԵԾՈՒ.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Մեր հոգեկան առաջին պարտականութիւնը ո՞րն է.

Պ. Մեր հոգեկան առաջին պարտականութիւնն է ինքնաճանաչութիւնն, որ ակտորն է իմաստութեան, վասն զի մեր այս գիտակցութիւնը մեր միտքը կը լուսաւորէ պարտականութիւններու ու մեր պէտքերու մասին :

Հ. Ինինաճանաճութեան արդիւնքը ի՞նչ է .

Պ. ինքնաճանաճութեան արդիւնքը Համեստութիւնն է . մենք գիտենք թէ մեր ուժերը սահմանափակ են, թէ մեր պակասութիւնները բազմաթիւ, ուստի խորշներ հպարտութենէ ու սհամասութենէ :

Հ. Հոգեկան կարողութիւններ որո՞ւ կ'ըստին :

Պ. Մյն կարողութիւններուն՝ որոնցմով հոգին իր գոյութիւնը կը յայտնէ. ինչ որ ևն զործարանները մարմայն համար՝ նոյնն են այդ կարողութիւնները հոգիին համար :

Հ. Որո՞նք են այդ կարողութիւնները .

Պ. Հոգեկան կարողութիւնները երեք են, Զգայականութիւն, իմացականութիւն եւ կամք :

Հ. Ի՞նչ է Զգայականութիւնը .

Պ. Մեր հաճոյք կամ ցաւ զգալու կարողութիւններուն Զգայականութիւն կը սուի:

Հ. Ի՞նչ է Իմացականութիւնը .

Պ. Իմացականութիւնը հոգիին այն կարողութիւնն  
է որով կը ճանչնանք ճշմարտութիւնը , այսինքն կը  
տեսնենք իրերն՝ ինչպէս որ են :

Հ. Ի՞նչ է Կամֆը .

Պ. Կամֆը հոգեկան այն կարողութիւնն է՝ որով ա-  
զատորէն կընտրենք ու կ'որոշենք բարին եւ չարը :

### ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Որո՞նի օգայականութեան վերաբերեալ մեր  
պարտականութիւնները .

Պ. Օգայականութեան վերաբերեալ մեր պարտա-  
կանութիւններն են , հաճոյքի մէջ Զափառորութիւն եւ  
վիշտի մէջ Համբերատարութիւն : Պէտք չէ որ հաճոյքը  
յուղէ մեղի եւ վիշտը ընկճէ :

Հ. Որո՞նի օգայականութեան զիսասոր քշնամիները .

Պ. Զգայտկանութեան գլխաւոր թշնամիներն են կիր-  
քերը . օրինակի համոր , Հոգարտութիւն , Նախանձ ,  
Բարկութիւն եւ Առելութիւն . կիրքերը շատ անգամ  
ինքիններն կը հանեն մարդը եւ անմիտ գործեր ընել  
կուտան :

Հ. Ամենին ահարկու կիրքը ո՞րն է .

Պ. Բարկութիւնը , որ յիմարութիւններ գործել կու-  
տայ մեղի . բարկացած մարդը վտանգաւոր է ուրիշնե-  
րու համոր :

### ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Որո՞նի օգայականութեան վերաբերեալ մեր  
պարտականութիւնները .

Պ. Իմացականութեան վերաբերեալ մեր պարտակա-

Նութիւններն են՝ սիրել ճշմարտութիւնը եւ փնտուել զայն ուսման միջոցաւ։ Տգիտութիւնը, Ծուլութիւնը եւ Ստախօսութիւնը ախտեր են։

Հ. Ի՞նչ է Ստախօսութիւնը։

Պ. Ստախօսութիւնը կը նշանակէ համոզումին հակառակը խօսիլ։ ստախօսութիւնը մարդու բարոյական արժէքը կը ջնջէ եւ անարդ արարած մը կընէ զինքը։ ուրեմն միշտ անկեղծ ըլլանք, սիրենք ճշմարտութիւնը եւ ջատագովենք զայն։

### ԿԱՐՔ

Հ. Կամքի վերաբերեալ մեր զիխաւոր պարտականութիւնը ո՞րն է։

Պ. Կամքի վերաբերեալ մեր զիխաւոր պարտականութիւնն է Հոգեկան ուժ։ պարտականութիւնը կատարելը դժուար է՝ առանց ունենալու հոգեկան ուժ։

Հ. Ի՞նչ լսել է Զեռներեց ողի։

Պ. Զեռներեց ողի ըսելով պէտք է հասկնալ տեսակ մը եռանդ, որ կը մղէ զմեզ գործելու՝ մեր կեանքի պայմանները բարւոքելու նպատակով։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Ի՞նքնաճանաչութիւն.
2. Զգոյտականութիւն.
3. Խմացականութիւն.
4. Կամք.
5. Զեռներեց ողի։

q.

ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**Հ.** Ի՞նչու պարտականութիւններ ունինք ուրիշներուն նկատմամբ :

**Պ.** Որովհետեւ անոնք մեր նմաններն են, պարտինք միշտ յարգել, սիրել զանոնք եւ ծառայել անոնց արժանապատութեանը, ինչպէս որ կընենք մեր անձին նըլկատմամբ :

**Հ.** Ի՞նչ պարտականութիւններ ունինք ուրիշներուն նկատմամբ :

**Պ.** Ուրիշներու նկատմամբ ունեցած պարտականութիւննիս երկու տեսակ են, Արդարութեան եւ Գթութեան պարտականութիւններ :

**Հ.** Արդարութեան պարտականութեանց բանաձեւը ո՞րն է :

**Պ.** Արդարութեան պարտականութեանց բանաձեւն է հետեւեալը, «Մի՛ ըներ ուրիշին այն բանը զոր չես ուզեր որ քեզի ընեն» :

**Հ.** Գրութեան պարտականութեանց բանաձեւը ո՞րն է :

**Պ.** «Ըստ՝ ուրիշին այն բանը զոր կ'ուզես որ քեզի ընեն» :

**Հ.** Կարեղի է աւելի որոշ եւ համառօս իերպով բացատրել մեր այս պարտականութիւնները :

**Պ.** Այս, ես պիտի ըստմ որ մէկու մը չորիք չընելը

Արդարութիւն է, ուրիշներու բարիք ընկելն աւ Գթա-  
սիրութիւն։ Արդարութիւնը յարգանք մըն է, Գթու-  
թիւնը՝ սէր։

Հ. Ո՞րև և Արդարութեան պարտականութիւնը.

Պ. Արդարութեան պարտականութիւնն է՝ յարդելմեր  
նմաններուն կեանքը, ինչքը եւ համբաւը։

Հ. Որո՞նի եւ Արդարութեան պարտականութեանց բառ-  
նաբարումը.

Պ. Սպանութիւն, Գողութիւն, Զրպարտութիւն եւ  
Բամբանանք։

Հ. Մարդ կրնա՞յ ինին իր զլյոււն դատաստան ընել.

Պ. Ոչ, մարդ սիէտք չէ որ ինքն իր զլյոււն դատաս-  
տան ընէ. ընդհակառակն պարտաւոր է երկրին օրէնք-  
ներուն դիմում ընել։

Հ. Ներկյի՞ և չարիքի վիխարեն չարիք ընել.

Պ. Ոչ, ներկյի չէ՛ չարիքի փոխարէ՞ն չարիք ընել.  
սիէտք է ներել թշնամութեանց։ Լուսազոյն մարդը այն  
է՝ որ չարիքի փոխարէն բարիք կընէ։ Արդար ըլլալու  
ամենէն ապահով միջոցն է՝ ԲԱՐԻ ըլլով։

Հ. Գրութեան պարտականութիւնները որո՞նի են.

Պ. Գթութեան պարտականութիւնները սա երկու  
բառերուն մէջ կը բովանդակին, Եղայրսիրութիւն եւ  
Ձեռնոտութիւն։ Մարդկութիւնը ընտանիք մըն է, ո-  
րուն մէջ զօրտւորներն ու բախտասորները պարտին օգ-  
նել տկարներուն եւ գժբախտներուն, ինչպէս կընեն եղ-  
րայրներն իրարու։

Հ. Եիրական ձեռնոտութիւնն է միայն գրութեան  
պարտականութիւնը.

Պ. Գթութեան պարտականութիւնն է ուրիշին օգնել

ոչ միայն քսակով՝ այլ գաղափարներով ու բարի խորհուրդներով։

Հ. Ի՞նչ է Ընկերականութիւնը։

Պ. Ընկերականութիւնը այն տրամադրութիւնն է որ մարդք կը մզէ առելի մօտենալու իր նմաններուն եւ կենակցելու անոնց հետ՝ բարուք յարաբերութեամբ։ Մենք պարափնք մեր սիրտին մէջ համակրութիւն ունենալ եւ մեր միտքին մէջ բարեսիրութիւն եւ հանդարտութիւն։

Հ. Ի՞նչ է Ծերողամտութիւնը։

Պ. Ներողամտութիւնը կը նշանակէ՝ յարգելուրիշներուն կարծիքն ու հաւատքը, ընկերականութիւնը գործադրելու լաւագոյն միջոցն այն է։

Հ. Ինչո՞ւ պէտք է յարգել ուրիշներու կարծիքն ու հաւատքը։

Պ. Որովհետեւ մեր նմաններն ստիպուած չեն անպատճառ ընդունելու մեր գաղափարները, անոնք իրաւունք ունին յարելու իրենց գաղափարներուն. ասոր համար պէտք է վարժուինք հակառակութիւն չընելու։

Հ. Ի՞նչ է Աններողութիւնը։

Պ. Աններողութիւնն է միտքի այն տրամադրութիւնը որ կը թելադրէ մեզ զայրանալու մեր նմաններուն դէմ, եւ արհամարհել զանոնք՝ երբ տարրեր կարծիք եւ համոզում ունին։ Աններողութիւնը գէշ զաղափար մըն է։

Հ. Ի՞նչ է Բարեկամութիւնը։

Պ. Բարեկամութիւն կ'ըսուի երկու կամ առելի անձերու միջեւ եղած փոխադարձ սիրոյ կասփին, որ կը միացնէ զիրենք։ Բարեկամ մը՝ երկրորդ «ես» մըն է։ Բարեկամութիւնը կը գեղեցկացնէ կեանքը, կը կըկնա-

պատկէ մեր ուրախութիւններն ու . կը սլակսեցնէ մեր  
շաւերը :

Հ. Ի՞նչպէս պէս և զնորեն մեր բարեկամները .

Պ. Պէտք է ընտրենք մեր բարեկամները բարի մար-  
դոց մէջէն : Բարեկամութիւնը երջանիկ կընէ մեզի, եւ  
պարկեցտ մարդոց մէջ միայն տեւական կրնայ ըլլով :

### ԲՈՎԱՆԴՈՒԹԻՒՆ գլուխորու առ Ա

1. Մեր ընկեր արտօրածները մեր նմաններն են. 2. Անսնց նկատ-  
մամբ ունեցած պարտականութիւններնիւ. 3. Գթութիւն եւ Ար-  
դարութիւն. 4. Ներսղամութիւն եւ Աններսղութիւն. 5. Բա-  
րեկամութիւն:

~~—————~~

Ա Անհայտ առաջիւն բարով և իւրաքանչյան առ Ա

այս ձև նույնական մուսանման ով ընտելիցի. Պ  
այ զնուա . պատճենակար ով այնուուց անօնար  
պատ քաղմական պար ը եղի այնու մինչ գլուխ  
այնուց մի եւ առանուած զնուանելով չ զամա զանու

ունի նախանակ ձև իջուի չ մերժելուրածի. Պ  
այ մասնաւան ով այսակար ով նկատի ամ ու-  
ուր և զնծուր զնուան ով գումար վեղուաւուր և  
չ ով զախարուր չը զմունայուածի . մուս նարի

այս միւս հայք այդ վայով մատնաշնութագա՞ Պ  
այ ով զնուայ լուսի նույնաշխի նար ունչի այդ  
չ մուս ամ բառուկ ով նախաւան . զնուցի նարաւ  
անմուկ ով ուսուայ նախութիւր ով ով նախամի մուտ

ապագար ողի դո յի : վեամնան ճամփաւ միջուի աչքի զանձ  
ու ճապիս ամ Հղաւարի **կ**, վայ ելքա ցըմմէի նկատմար  
: և յանձնաւ պահանջեն : ճառուալի լոյլու ճարդալ

## ԱՍՏՈՒԾՈՅ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ամ է առ առ առ առ պատճառ մշղամայ ճառուալի .  
այս Հ. Ո՞վ կ Ասուած ,  
Պ. Աստուած աշխարհի ստեղծողն է ու մարդոց հայրը :

Հ. Ամեն մարդ Ասուծոյ վրայ միեւնոյն ըմբռնումը  
ունի .

Պ. Ոչ , ամեն մարդ ունի իր գաղափարը Աստուծոյ  
վրայ , ասկէց է որ շատ մը կրօնքներ կան , օրինակի  
համար , Քրիստոնէ ութիւնը , Մահմետականութիւնը ,  
Հրէականութիւնը եւ այլն կրօնքներ են :

Հ. Ամեն կրօնի իրեն յատուի բարոյականը ունի ° .

Պ. Թէ եւ շատ մը կրօնքներ կան , բայց մէկ բարոյա-  
կան կայ միայն , ընդհանուր բարոյականը զոր խիզճը  
կը թելադրէ եւ որ հիմնուած է մարդկային արժանա-  
պատուաթեան վրայ :

Հ. Որո՞նի են մեր պարտականութիւնները Ասուծոյ  
նկատմամբ ,

Պ. Պէտք է իրրեւ կատարեալ էակ յարդել զԱստուած ,  
որ ստեղծիչն է ամեն արարածներու . սկէտք է սիրել  
զիյն իրրեւ հայր մարդկային ընտանիքի :

Հ. Ի՞նչպէս պէտք է յայտնել մեր սկըն ու յարգանիք  
Ասուծոյ նկատմամբ .

Պ. Զթերանալով երբէք մեր պարտականութիւններուն  
մէջ , եւ յարդելով իր անունը , զոր պէտք է արտասա-

Նենք միշտ խորին ակնածութեամբ : Ով որ իր պարտա-  
կանութիւնները անթերի կը կատարէ՝ նա սիրած ու  
յարգած կըլլայ զԱստուած : Սշմատիլը՝ աղօթել է :

### ԲՐՎԱՆԴԱԿԱԹԻՒՆ

1. Աստուած աշխարհի ստեղծողն ու մեր Հոյրն է . 2. Թէեւ  
շատ մը կրօնքներ կան, բայց մէկ բարոյական իւց 3. Պարտինք սի-  
րել ու յարգել զԱստուած :

Անդ ըստու ու մարդու մէջ պատճեն առաջարկ է :

Կատարուած պատճեն առաջ առաջ առաջ առաջ . 4. Պ  
ատամփու մաք պատճեն առաջ առաջ առաջ . 5. Պատամփու մաք  
պատճեն առաջ առաջ առաջ առաջ առաջ . 6. Պատամփու մաք

### ՊԵՐՉ

7. Պատամփու մաք պատճեն առաջ առաջ առաջ . 8. Պ  
ատամփու մաք պատճեն առաջ առաջ առաջ . 9. Պատամփու մաք  
պատճեն առաջ առաջ առաջ առաջ . 10. Պատամփու մաք

պատճեն առաջ առաջ առաջ առաջ .

11. Պատամփու մաք պատճեն առաջ առաջ առաջ . 12. Պատամփու

պատճեն առաջ առաջ առաջ առաջ . 13. Պատամփու մաք

պատճեն առաջ առաջ առաջ առաջ . 14. Պատամփու մաք

պատճեն առաջ առաջ առաջ առաջ . 15. Պատամփու մաք

պատճեն առաջ առաջ առաջ առաջ . 16. Պատամփու մաք

# ՑԱՆԿ

ԳԼՈՒԽ Ա.

ԵԶ

*Surkrf Բարոյականի*

5

ԳԼՈՒԽ Բ.

*Տղուն պարտականութիւնները*

Ա. Տղան իր ընտանիքին մէջ . . . . . 7

Բ. Տղան վարժարանին մէջ . . . . . 10

ԳԼՈՒԽ Գ.:

*Մարդուն պարտականութիւնները*

Ա. Իր անձին նկատմամբ . . . . . 13

Բ. Մարմինին նկատմամբ . . . . . 14

Գ. Արտաքին բարիքներու նկատմամբ 15

Դ. Անասուններու նկատմամբ . . . . . 19

Ե. Հոգիի վերաբերեալ պարտականութիւններ 20

Զ. Ուրիշներու նկատմամբ պարտականութիւններ 23

Է. Աստուծոյ նկատմամբ պարտականութիւններ 27



առաջ մաս բարեւ ակնու առաջ առ այս պատճեն  
ի վեհական առաջի առաջի առ պատճեն առ առ առ  
պատճեն առ պատճեն առ պատճեն առ պատճեն առ պատճեն

## Ա. ԱՊՐԻԼԻ

## Ծ. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿ.

## Ա. ԱՊՐԻԼԻ

պատճեն գումարան մեջ Տ

- 7 . . . . ջն միջմասամբ այ մարշ . Ա  
10 . . . . ջն միջմասանդակ մարշ . Ա

## Ա. ԱՊՐԻԼԻ

## Կ. ԱՐԱՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄԵՐԱԿԻ

- 13 . . . . պատճենային միջմաս պի . Ա  
14 . . . . պատճենային միջմասային . Ա  
15 . . . . պատճենային աղմացիսայ միջմասայի . Բ  
16 . . . . պատճենային աղմացիսամամալ . Բ  
17 . . . . ամաթիսայուր յամունադիմ դիբան . Ա  
02 . . . . դժմային  
- ախտադաս պատճենային աղմացիսայ . Բ  
03 . . . . դժմային ելուս  
- ամաթիսայուր պատճենային լունամալ . Բ  
19 . . . . դժմային





2015

6-48







